

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ՔԱՂՈՒՄԻՔ Ի ԿՈՆԴԱԿՄՈՑ ՎԵՋ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Վիճակային Կոնսիստորիայի Վրաստանի և Իմլրէթի որով պատուիրեցաւ նշանակել մասնագէտ անտառապահ ոմն ի կառավարել վիսլուածս Մարցայ և զանտառս վանորէիցն Սանահնի և Հաղարծնի: Թ. 1069:

— Յանուն Տ. Կարեզին վարդապետի Սաթունեանց, որով պատուիրեցաւ նմա ընկերակցութեամբ Տ. Թադէոս վարդապետի Առիւծեանց զնալ ի վանս Ս. Թաշի Արզեազու յաղագս հսկելոյ ի վերայ արդեանց ուխտի տօնին: Թ. 1061.

— Յանուն Տ. Թուսիկ վարդապետի Զոհրաբեան, որով կարգեցաւ օգնական Տեւչի Հոգեւոր ձեմարանի Մայր Աթոռոյ: Թ. 1070.

— Յանուն փոխ Առաջնորդի Վասպուրականի Տ. Սահակ վարդապետի և Թադ. խորհրդոյ Յայնկոյաներ եկեղեցւոյ Վան քաղաքի որով պատուիրեցաւ չր կառուցանել նոր Տաճար առ ընթեր եկեղեցւոյն յորժամ քակեալ ունին զհնադարեան Տաճարն: Թ. 1073.

— Յանուն Վիճակային Կոնսիստորիայի երեւանայ, որով պատուիրեցաւ Թողուլ անպահանջ զվեց հարիւր (600) բուրլիսն ի պ. Արշակայ Զիլինդարեան՝ ուսուցչի Թեմական Հոգեւոր Կարանոցին Արցախայ (Նուշի), քանդի (պ. Զիլինդարեան) յուսանողութեան իւրում նպատ ընկալեալ է զայդ գումար ի Վեհափառ Հայրապետէն ի գումարաց եկեղեցեացն Աղէքսանդրապոլու յամին 1896, և ոչ որպէս պարտ: Թ. 1083.

— Յանուն Կոնսիստորիայի Վրաստանի և Իմլրէթի, որով պատուիրեցաւ հրամայել խստիւ ստորագրեալ իշխանութեանց իւրոց

չը Թաղել զոր ի գաւիթս եկեղեցեաց Թարց հրամանի և Թոյլաւութեան Մայրապոյն Հոգեւոր իշխանութեան. Թ. 1095.

— Յանուն եկեղեցական խորհրդոյ եկեղեցեաց Մայրաքաղաքին Ս. Պետրոսեղի որով յանձնարարեցաւ հոգալ յեկեղեցական եկամտից զծախս ուսման և սննդեան միարանի Մայր Աթոռոյ Շնորհ. Սմբատ սարկաւազի որ ուսանի ի բաժնի արեւելեան լեզուաց Կայս. համալսարանի տեղւոյն: Թ. 1112:

— Յանուն Սինօդի Ս. Էջմիածնի յաղազրս յատկացուցանելոյ ի տոկոսեաց կտակի Տիկին Շողակաթի Մեղիքեան Բագուեցւոյ ի տարին ութ հարիւր (800) բուրլի ի ծախս ուսման և սննդեան միարանի Մայր Աթոռոյ Շնորհ. երուանդ Սարկաւազի որ ուղեւորեցաւ հրամանաւ Հոգեւոր Տեառն ազգիս յուսումն Մանկավարժութեան: Թ. 1114.

— Յանուն Կոնսիստորիայի երեւանայ, որով ներումն շնորհեցաւ արգելեալ Յովհաննէս քահանայի Կաղզուան աւանի, համաձայն զղջման նորա և միջնորդութեան պատուաւոր ազգայնոցն տեղւոյն: Թ. 1122.

— Յանուն նորընտիր Հոգաբարձութեան Ս. Թովմայ Առաքելոյ վանուցն Ագուլեաց, որով հաստատեցան ի պաշտաման իւրեանց ըստ ընտրութեան Ժողովրդեան տեղւոյն և առաջարկութեան Կեր. Տ. փոխ. Թեմակային երեւանայ Ս. Սուքիաս Արքեպիսկոպոսի: Թ. 1142.

— Յանուն նորընտիր Հոգաբարձութեան ներսիսեան Հոգեւոր Կարանոցի Տիկեաց, որով հաստատեցան ի պաշտաման իւրեանց ըստ ընտրութեան պատգամաւոր աշխարհականաց եկեղեցեաց Տիկիսիայ և ըստ ընտրութեան հոգեւորականաց եկեղեցեաց քաղաքին և հոգեւորական պատգամաւորաց Կանձակ, Կօրի

և Ախալցխա քաղաքացի փիճակին և համաձայն առաջարկութեան Գեր. Տ. թեմակալի վրաստանի և Խմբէթի Ս. Կէորգ Արքեպիսկոպոսի թ. 1143:

— Յանուհ Տ. Գարեգին վարդապետի Սթեփանեանց որով կարգեցաւ ընդհանուր վերահսկող տնտեսական վարչութեանց Մայր Աթոռոյ. թ. 1148:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵԼԻԲ

Յաւոր Աթոռակալութեան Է. Տարեդարձի Հոգեւոր Տնառն Ազգիս

— Շնորհեցան լանջախաչք վարդապետականք ակնանկութեան ի տրիտուր բարուրք և ամբիժ ծառայութեանց իւրեանց Տ. Արսէն վարդապետի Տեղապահ Վաթուղիկոսութեան Տանն Աղթամարայ. Տ. Սահակ վարդապետի փոխ. Առաջնորդին վասպուրականի. և Տ. Գաւիթ աւագ քահանայի Եւրաբեան Գործակալի շրջանին Քուծայիսայ և Սուխումեան շրջանին ի տրիտուր արդիւնաւէտ և հաւատարիմ գործունէութեան քառանկալեաց ամբիժ ծառայութեան նորա ի քահանայական կոչման որ յողուաւ և ի յառաջադիմութիւն փրախօս ժողովրդեան տեղւոյն. թ. կոնդակաց 1040, 1075, 1076:

— Շնորհեցան պատիւ Աւագ Քահանայութեան անդամոյ կոնսիստորիային Շամախոյ Տ. Տաճարայ Մարապեան. ծխատեառն Աւետեաց եկեղեցւոյ Տփիսեաց Տ. Գէորգայ Արուշեան. Գործակալի Բ. մասի եկեղեցեաց Տփիսեաց Տ. Գրիգորի Մանգակունոյ. ծխատեառն ա. Թէոգորոս եկեղեցւոյ Ն. Նախիջևանի Տ. Սարգսի Մաքսիմաճեան. և անդամոյ Հոգ. Կառավարութեան Ն. Նախիջևանի Տ. Մարտիրոսի Գանձապետեան. թ. Կոնդակաց 1024, 1028, 1029, 1041 և 1042:

— Շնորհեցան արտօնութիւն կրելոյ Կաթիլաւայ գլխարկաց հարց քահանայից՝ Անդամոյ Կոնսիստորիային Երեւանայ Տ. Գարեգինի Խաչատրեան. կրօնուսուցի ա. Նունեան Սր. Աւսումնարանին Քուծայիսայ Տ. Յովսէփայ Ամիրադեան. թ. կոնդակաց 1026, 1030:

— Շնորհեցան արտօնութիւն կրելոյ լանջախաչք քահանայականաց բարեկրօն հարցքա-

հանայից՝ ըստ յետագայից, Անդամոյ Կոնսիստորիային Շամախոյ Տ. Մակարայ Անտոնեան. ծխատեառն Ս. Յովհաննէս եկեղեցւոյ Երեւան քաղաքի Տ. Ստեփաննոսի Տ. Խահապեան. Անդամոյ Հոգեւոր Կառավարութեան Ախալցխայ Տ. Կարապետի Տ. Մարտիրոսեան. Գործակալին Սննակայ Տ. Արշակայ Տ. Ստեփանեան. ուսուցչի Ներսէսեան Հոգեւոր Գալանտի Տփիսեաց Տ. Կաթուարի Արուշեան. ծխատեառն Զրկինեանց ա. Կարապետ եկեղեցւոյ Տփիսեաց Տ. Գրիգորիսի Երզրնեան. ծխատեառն Վաղթականաց Տփիսեաց Տ. Ղեւոնդի Մամիկոնեան. ծխատեառն Յիսինիալ գեղջ Տ. Բարսիլի Տ. Արքահամեան. ծխատեառն վաղայ գեղջ Տ. Սահակայ Յովհաննիսեան. ծխատեառն Գեղարեգ գեղջ Տ. Շմառնի Բորեան. Գործակալին վաղարշապատայ Տ. Սարգսի Ասլանեան. ծխատեառն միացեալ եկեղեցեաց քաղաքամիջի վան քաղաքի Տ. Կարապետի Աւստիան. թ. Կոնդակաց, 1025, 1027, 1031, 1032, 1033, 1034, 1035, 1036, 1037, 1038, 1039, 1043, 1046:

— Շնորհեցան արտօնութիւն կրելոյ ծաղկեաց փիլոնայ՝ Գանձապահ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի բարեշնորհ Տ. Եղիշէ վարդապետի Ահարօնեան և հետեւեալ հարց քահանայից. ծխատեառն եկեղեցւոյն հայոց Սիմէֆերոպոլի Տ. Ղազարոսի Յովսէփեան և ծխատեառն Ս. Զորաւոր եկեղեցւոյ Երեւան քաղաքի Տ. Արիստակէսի Զրբաշխեան. թ. կոնդակաց 1023, 1044 1045:

Վերոգրեալքն պարգևատրեցան ըստ միջնորդութեանց Գերապատիւ Թեմակալ Առաջնորդաց իւրեանց Ս. Արքեպիսկոպոսաց Տ. Ներսիսի Խուրապէրդեան թեմակալին Բեսարաբիոյ. Տ. Գէորգայ Սուրենեան, թեմակալին վրաստանի և Խմբէթի Տ. Սուքիասայ Պարզեան փոխ. թեմակալին Երեւանայ. և Տ. Կաթիլայ Աստուածատրեան թեմակալին Շամախոյ. Հայրապետական Օրնութիւն եւ Շնորհակալիք

— Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուհ պ. Անտօնի Թամբեան Աստուածատրեանց, յաղագս նուիրաբերութեան նորա մի հարիւր վաթսուն (160) բուրբեաց ի նպատակ Մայր Աթոռոյ, ըստ բազմամեաց սովորութեան իւրոյ. թ. 1191:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տ. Մարտիրոս Աւագ քահանայի Տ. Պօղոսեան, կառավարչի վանուցն Հառիճոյ յազազ ջանից իւրոց և աշխատանաց, ի շինութեան ջրանցին մշտահոս երկուց աղբերց, մինն ի գաւթի վանուց Հառիճոյ և միւսն ի զիւզամիջն Ղփչապայ: Թ. 1140.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն բարեպաշտուհի Տիկին Մարգարտի Աղանեանց Ալէքսանդրապոլցոյ և երկուց զատեւրցնորին Տիկին Սանդիտոյ Սանասարեան՝ և Օր. Պշխուհոյ Ասլանեան, որպէս կտակակատարաց հանգուցեալ Խաչատրոյ Սանասարեան Աղէքսանդրապոլցոյ, որոյ կտակաւ հոգացան ծախք շինութեան ջրանցից երկոցունց աղբերց վանուցն Հառիճոյ: Թ. 1141:

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն նախորդ Հոգարարձութեան ներսիսեան Հոգեւոր դպրանոցի Տիկնաց, յազազս բարուոր և հաւատարիմ ծառայութեանց նոցին յընթացս պաշտօնավարութեան իւրեանց: Թ. 1144.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն՝ կտակակատարաց հանգուցեալ Ենովքայ Բուդաղեանց Բագուցոյ Պարոնայց Մովսիսի, Եղիայի, Երուանդայ Տ. Թագէտոսեան Բուդաղեանց, և պ. Բագդասարայ Դօլուխանեանց, որք յղեցին զքսան հազար (20000) բուրլիս կտակեալս ի հանգուցելոյն յանուն Հոգեւոր ձեմարանի Մայր Աթոռոյ, Թողլով մայր գումարն անձեռնմխելի, և տոկոսիւք որոյ պարտին ուսանել ի համալսարան՝ ի սանուց աւարտողաց զիսկատար ընթացս Հոգեւոր ձեմարանի այնպիսիք, որք ցանկան ընդունել զկոչումն Հոգեւորականի: Թ. 1145:

ԱՅԴ

Ի ԴԻԵԱՆԷ՛՛ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ:

Այսու յայտարարի ի գիտութիւն Հոգեւոր վարչութեանց, և աշխարհիկ դատու միւրադնէից եթէ, Նորին Ս. Օծութիւն Հոգեւոր Տէրն ազգիս, ազատ կացոյց ի միաբանութենէ, Մայր Աթոռոյ և ի կոչմանէ Կուսակրօնութեան զՀմայեակ վարդապետ Տ. Յա-

րութիւնեան Ախալցխացի, ըստ կրկին խընդրանաց նորա մատուցելոց յանուն Նորին Սրբութեան յԳՆ յունիս և յԴՆ նոյեմբերի տարոյս, որ և ընդունելով Վեհափառ Տէրն բարեհաճեցաւ մակագրել ի վերայ վերջին խնդրոյ նորա այսպէս «յանձնեմք ի Սինօդ զրել ուր հարկն է ազատ համարել ըզխնդրատուն ի Հոգեւոր կոչմանէ ըստ ցանկութեան և խնդրանաց իւրոց»:

Ուստի և հրաժարեալն կամովին ի կարգէ և ի կոչմանէ, Հոգեւորականութեան, դադարեալ է յետ այսու կրելոյ զպեմ և զվեղար կուսակրօնի և կատարելոյ զո՛ր և է սրբազնագործ պաշտօն և եկեղեցական օրինակատուութիւն համարելով իբր աշխարհիկ որ:

Ստորագրութիւն Դիւանապետի

Վրիպակ Հոկտ. համարի պաշտօնական մասի մէջ երկու սխալ կայ, որ անհրաժեշտ ենք համարում ուղղել. Ա. «Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի» վերնագրի տակ՝ առաջինը վերաբերում է Արցախի կոնսիստորիայի ծառայողներին, որ տարաբախտաբար բաց էր թողնուած տարագրութեան ժամանակ: Բ. «Քաղուածք Սինօդի Օրագրութիւններից» չորրորդը, որ վերաբերում է Աւետիս քահանայի կարգալոյծ անելուն, զիւղի անունը «Գողափանք» է տպուած, փոխանակ «Գոշափան»-ի:

ԵԱՆՕԹ. ԽՄԲ.



ԿՐՕՆԱԿԱՆ

ՓՐԿՈՐԵԱՆ ԲԱՆԱԿԸ*

Եօթնասնական թուականների սկզբում անդղիացի Բութը Լոնդոնում ախրով աղքատ

* Կրօնական այս շարժման մասին ընթերցողները առաջին անգամ ծանոթանում են սոցիալ. Արարտաի 1895թ.